

Ո՞Վ Է ԱՐՄԵՆ ՉԱՔԱՐԵԱՆ

Ծնեալ 21 դեկտեմբեր 1916թ. Թուրքիա, ընտանիքը փրկուած 1915թ. Հայոց Ցեղասպանութիւնէն Պուլղարիոյ ճանապարհով 1930թ. կը հասնի Ֆրանսա. 1937թ. իր զինծառայութեան պարտականութիւնը կը կատարէ որպէս ծանր թնդանօթաձիգ. կը մասնակցի 1939-1940թթ. Մեօզ և Արտէնի մարտերուն: Ֆրանսայի պարտութիւնէ յետոյ 5 օգոստոս 1940թ. Ան ազատ կ'արձակուի զինծառայութիւնէ: Արսէն 1940 և 1942թ. ընթացքին Միսաք Մանուշեանի հետ կը գործէ հակահիթլերական թռուցիկներ կը բաշխէ ժողովուրդին: Jean Moulin'ի կարգադրութեամբ երկոքեան ընկերները վասն պահեստի զինուոր, հիմնուած գաղտնի բանակի առաջին բաժնակի զօրավար Delestraint'ի հրամանատարութեան տակ կը դրուի: Արսէն 17 մարտ 1943թ. Մանուշեանի հետ փորձարկութեան քննութեան մը կ'ենթարկուի " l'attaque d'épreuve". Փարիզեան շրջանի Levallois-Perret'ի մէջ յարձակում կը գործէ գերման ժանտարմայական վաշտի մը վրայ: Միսաք Մանուշեան մայիսին կոչում կը ստանայ որպէս հրամանատար Առաջին Բանակի:

Երեք ամսուոյ ընթացքին երրախմբային յարձակումներու քանակը կը հասնէր 115 արարքի: Մանուշեան իր 23 ընկերներով կը ձերբակալուի մատնութեան մը հետևանքով: 21 փետրուար 1944թ. անոնք կը գնդակահարուին Mont Valérien'ի բարձունքի վրայ: Արսէն ոստիկանական վաշտի երկրորդ մարզի պետ David'ի կողմէ կը փնտռուի. Montrouge'ի ընդդիմադիր ոստիկաններու ջանքերով ապաստան վայր մը կը մատուցուի Արսէն Չաքարեանի փարիզեան վայրի մը մէջ: Ոստիկանական ընդդիմադիր ջոկատը նկատի ունենալով Արսէնի բարթիզանական մարզի մէջ ունեցած փորձառութեանը զինքը կը դրկէ Bordeaux ուր քաղաքին Malignac օդակայանի ռմբակոծութեան ծրագիրը պիտի պատրաստէ Դաշնակիցներու դէպի Ֆրանսա ցամաքահանումը ապահովելու համար: Յունիսի սկիզբը հազարապետ Bourgeois'ի հրամանատարութեան տակ Montargis բարթիզանական խումբ մը կազմելու համար Արսէն Փարիզ կը կանչուի. ան իր զինուորական lieutenant'ի աստիճանով կը հրամայէ 20 ընդդիմադիր գումարտակի. յախուռն քաջութեամբ մղած պայքարէ վերջ իր խմբակով կը վերադառնայ Montargis ուր կը գրաւէ գերման Kommandatur'ը:

Պատերազմէ վերջ Արսէն Ֆրանսայի Նախարարական հրամանագրով կը կոչուի Բանակի Տեղակալի տիտղոսով: Ֆրանսայի Պաշտպանութեան Նախարարութիւնը զինքը պարգևատրած է Արծաթեայ մետալով. Արսէն 2005թ. Ֆրանսական կառավարութեան կողմէ պարգևատրուած է Chevalier de la Legion d'Honneur շքանշանով, ստացած է աւելի քան 20 մետալներ թաղապետներէ որոնց քաղաքը պատերազմի առթիւ ընդդիմադրական պայքարի թատերաբեմ դարձած են: 1997թ. Ֆրանսայի Նախկին Ռազմիկներու Նախարարութեան ցանկութեամբ Արսէն նշանակուած է Յիշողութեան Յանձնախումբի անդամ և վասն պատմաբան լիազօրութիւն շնորհուած է պեղումներ կատարելու գերման պետական տոմարներու մէջ:

24 օգոստոս 2010թ. Val de Marne-ի կուսակալը հաղորդած է Ա. Չաքարեանի թե ընտրուած է որպէս թեկնածու Ակադեմական Պսակի Ասպետի կարգերու կոչումին: Ֆրանսական իշխանութեան կողմէ Ա. Չաքարեանի հանդէպ մատուցուած պատիւը կը հրճուէ մեզ բոլորս:

Արսէն Չաքարեան ու Հանրի Գարաեան Մ. Մանուշեանի խումբէն ողջ մնացած մարտիկներ մեր կազմակերպութեան MAFP-ի ցկեանս պատուոյ նախագահներն են: Կը խորհինք թէ երբ Մանուշեաններ մահու և կենաց պայքար մը կը մղէին Ֆրանսան ազատագրելու համար թշնամու լուծէն, ուրիշներ Գերմանիա գացած իրենց կամաւոր աշխատանքը կը մատուցանէին նացիական գործարաններու մէջ: Փառք ու պատիւ բոլոր այն հերոսներուն որոնք իրենց կեանքը զոհեցին յանուն ազատութեան, սիրոյ ու արդարութեան:

Ներսէս Տուրման
Փարիզ 29 նոյեմբեր 2010